

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ
15 հունիսի, 2020 N 29

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 15
ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 21 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **ո թ ո շ ու մ ե մ**.

1. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի մայիսի 12-ի «Արցախի Հանրապետության ողջ տարածքում կազմակերպություններում վարակի տարածումը կանխելուն ուղղված կանոնները սահմանելու վերաբերյալ» N 15 որոշման Հավելվածի 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 20.1. կետ.

«20.1. Փակ տարածքում արգելվում է երկու և ավելի անձանց (աշխատողների, հաճախորդների, այցելուների և այլն) գտնվելն առանց դիմակ կրելու՝ բացառությամբ հանրային սննդի օբյեկտների հաճախորդների:»:

2. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի հունիսի 9-ի «Արցախի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 21 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) փակ տարածքներում երկու և ավելի անձանց գտնվելու դեպքում՝ բացառությամբ բնակելի տարածքից և հանրային սննդի օբյեկտներից (վերջին բացառությունը վերաբերում է միայն հաճախորդներին):»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ